# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

## N ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-21/2024/ՍՅՈՒՆԻՔ
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «02» «08» 2024թ.

**ՀՀ ներքին գործերի նախարարությունը,** ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Խաչատրյանի, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով **27.05.2024թ.-ին** կնքված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-21/2024/ՍՅՈՒՆԻՔ** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.16 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-21/2024/ՍՅՈՒՆԻՔ** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **10 000 000 (տաս միլիոն)** ՀՀ դրամից սահմանել **200 000 (երկու հարյուր հազար)** ՀՀ դրամը ներառյալ ԱԱՀ-ն, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան, իսկ մնացած **9 800 000 (ինը միլիոն ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ գումարը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ |
| Հ/Հ 900011042471 | Հ/Հ 163288639103 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 01006813 |
| Հեռ. 010 59-68-57 | Հեռ. /+37410/ 50-60-00, բջջ. /+37491/ 70-75-85, /+37493/ 70-99-66 |
| Էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am | Էլ. Փոստ: artconsulting@mail.ru |
| Ա. Ֆիդանյան / ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար / (ստորագրություն) Կ.Տ | Ա. Խաչատրյան /տնօրեն/ (ստորագրություն) Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 02 » « 08 » 2024թ.*
***ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-21/2024/ԱՅՈՒՆԻՔ ծածկագրով***
***գնման պայմանագրի համաձայնագրի***

**Վճարման ժամանակացույց**

Ծառայություն /03.01.01.02/ ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 79541100/507 | Բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում | | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |
| 2 | 79531100/508 | Գրավոր թարգմանչական ծառայությունների մատուցում | | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-68-57**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**Ա. Ֆիդանյան**
**/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար /**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ**
**հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3**
**բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ**
**Հ/Հ 163288639103**
**ՀՎՀՀ 01006813**
**Հեռ. /+37410/ 50-60-00,**
**բջջ. /+37491/ 70-75-85, /+37493/ 70-99-66**
**Էլ. Փոստ: artconsulting@mail.ru**

**Ա. Խաչատրյան**
**/տնօրեն/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**